Ղեկավարվելով ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի ռաունդում մարդահամարի և կացարանների հաշվառման Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներով (“Рекомендации конференции европейских статистиков по проведению переписей населения и жилищного фонда 2010 года” տես՝ http://www.europa.eu.int/comm/eurostat/), ինչպես նաև վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) պահանջարկի ուսումնասիրության հիման վրա, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) մշակել է փորձնական մարդահամարի **Ծրագրի (հարցաշարի) նախագիծը**:

Փորձնական մարդահամարի ընթացքում փորձարկման ենթակա ծրագրի նախագծում նախատեսված հարցերն ընտրելիս հաշվի է առնվել միջազգային վիճակագրական չափորոշիչներին երկրի ցուցանիշների համադրելիության ապահովման, ինչպես նաև երկարաժամկետ միջակայքում միտումների բացահայտման տեսանկյունից դրանց հնարավոր կայուն պարբերականության պահպանման հանգամանքը:

Հարցերի ընտրությունը հիմնականում կատարվել է հիշյալ հանձնարարականներում ընդգրկված հիմնական և լրացուցիչ բնութագրիչներից՝ հաշվի առնելով երկրի սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները:

Ի տարբերություն ՀՀ 2001թ. ազգային մարդահամարի, ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի) նախագծում ընդգրկվել են գյուղատնտեսությանը վերաբերող հարցեր, որոնց ընտրության հարցում ևս ՀՀ ԱՎԾ-ն առաջնորդվել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի ռաունդում մարդահամարի և կացարանների հաշվառման Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականների սկզբունքներով, ինչը հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությունում ձևավորել գյուղացիական տնտեսությունների ռեգիստր, որը հիմք կհանդիսանա Գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ հաշվառման հասցեական դաշտի ձևավորման համար:

ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի 22 անդամներին և շահագրգիռ կառույցների 12 ներկայացուցիչներին ուղղված գրություններին ի պատասխան ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի) նախագծի վերաբերյալ ստացել է որոշ առաջարկություններ և դիտողություններ, որոնք զետեղված են <ՏԵՂԵԿԱՆՔ> փաստաթղթում: Տեղեկանքը և Փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշար) նախագծի վերախմբագրված տարբերակը ներկայացվում է:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի) նախագծի վերաբերյալ առաջարկությունների ու դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 11.12.2009թ. թիվ **25-7/72-1466** գրությունով ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի 22 անդամներին և շահագրգիռ կառույցների 12 ներկայացուցիչներին **առաջարկությունների և դիտողությունների ակնկալիքով** ներկայացվել է ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի) նախագիծը:

27.01.2010թ. դրությամբ պատասխան գրություններ ստացվել են նրանցից 24-ից: Մեկ բանավոր հարցազրույց է տեղի ունեցել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ տիկին Կ. Կույումջյանի հետ: Առաջարկություններ և դիտողություններ առաջադրել են նրանցից **11-ը,** գրությամբ՝ 10-ը:

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
1	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի նախագահ **պարոն Ա. Գևորգյան** Պատասխանել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ **պարոն Վ. Տերտերյանը**	25.12.2009թ. N 03/15/7320-09	Դիտողություններ և առաջարկություններ չկան	
2	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի նախագահի տեղակալ **պարոն Հ. Հակոբյան**	18.12.2009թ, N Ե-321	**1. Նախագծի 17-րդ** կետից հետո ավելացնել նոր հարց հետևյալ ենթահարցերով՝ «Իր տնտեսության կազմակերպման համար օգտվել է վարկեր վերցնելու հնարավորությունից (**Այո, Ոչ**): **Եթե «այո»՝** ինչ նշանակության վարկեր է վերցրել, ինչպես է գնահատում վերցրած վարկերի օգտագործման արդյունավետությունը (արդյունավետ, ոչ արդյունավետ): **2. Նախագծի 22-րդ** կետում ավելացնել «քանի՞ անգամ է դիմել ծննդի արհեստական ընդհատման համար» ենթահարցը:	**1.** Ծրագրի նախագծում հարցերն ընտրելիս ՀՀ ԱՎԾ առաջնորդվել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի ռաունդում մարդահամարի և կացարանների հաշվառման Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներով, որում նման բնույթի հարցի ընդգրկում նախատեսված չէ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ առաջարկվող հարցի պատասխանը հնարավոր է ստանալ նաև այլ աղբյուրներից, նպատակահարմար չէ մարդահամարի (համատարած հաշվառման) ժամանակ հարցաշարում ընդգրկել այս հարցը: **2.** Ընդունելի չէ, քանի որ այս հարցն առկա է «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի» հետազոտության

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
			3.**Նախագծի 29-րդ** կետում ավելացնել «պատրաստ է իր սեփական նախաձեռնությամբ ստեղծել իր աշխատատեղը» հարցը: 4. **Նախագծի 49-րդ** կետում «վարելահող» բառից հետո ավելացնել «բանջարանոց» բառը:	հարցաթերթում, որն անց է կացվում 5 տարին մեկ անգամ: 3.Առաջարկությունն ընդունվել է մասնակի՝ որոշակի փոփոխության է ենթարկվել զբաղվածության բլոկի հարցի հնարավոր պատասխանները: 4. Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կազմված ՀՀ հողային հաշվեկշռի, Գյուղատնտեսական նշանակության հողերի կազմի մեջ մտնում են՝ Բազմամյա տնկարկները, Վարելահողերը, Խոտհարքները Արոտավայրերը և այլ հողերը, իսկ **բանջարանոցը** հողօգտագործման ձև է, այդ իսկ պատճառով մարդահամարի հարցաթերթի հարցերի լրացման հրահանգում կտրվեն համապատասխան պարզաբանումներ:
3	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ս. Ավետիսյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-
4	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Գ. Ազարյան**	16.12.2009թ. N 01-564	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
5	ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **տիկին Ա. Սարիբեկյան**	Տիկին Կույումջյանի հետ բանավոր հարցազրույց	1. Հարցաշարի **9-րդ** կետում նշել նաև Երկքաղաքացիության հարցը 2. Հարցաշարի **12-րդ** կետի «Կրոնական դավանանքը» հարցում պարզաբանումներ մտցնել	1. Ընդունվել է: 2. Ընդունված է, հարցաթերթում հարցը կունենա հնարավոր հետևյալ պատասխանները՝ • Հայ առաքելական • Կաթոլիկ • Ուղղափառ • Բողոքական

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
				• Եհովայի վկա • Այլ քրիստոնեական • Հեթանոսական • Մահմեդական • Բուդդայական • Հուդայական • Այլ • Ոչ մի
			3. **21-րդ կետի** հուշման տարբերակներում ավելացնել նաև «Եկեղեցով գրանցված» ամուսնությունը կողը	3. Ընդունվել է, հնարավոր պատասխաններում ավելացվել է նոր ենթակետ՝ «միայն եկեղեցու կանոնական ծեսով իրագործված ամուսնություն»:
			4. **17-րդ կետում՝** կապիտալի իրացում (վաճառք) տողում կապիտալի բառից հետո փակագծերում ավելացնել գույքի բառը	4. Ընդունվել է:
			5. **26-րդ կետում՝** համատեղ գործունեություն գյուղատնտեսությունում (քաղ. օրենսգրքի 26-րդ կետի)	5. Զբաղվածության կարգավիճակի դասակարգման հարցում ՀՀ ԱՎԾ առաջնորդվել է ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգչով» ICSE-93՝ հաշվի առնելով նաև Ազգային կարիքները:
			6. Հարցաշարի 38-րդ հարցը հանել	6. Չի ընդունվել չէ, քանի որ հեռախոսի առկայությունը, S/S բնակության պայմանների բարեկարգվածության կոմպոնենտներից է:
			7. Մտածել, արդյոք միայն համակարգիչն ինտերնետին միացված լինելու հարցը, թե այլ աղբյուրներ ևս	7. Քանի որ հարցերը վերաբերում են տ/տ բնակության պայմաններին, այդ իսկ նկատառումներով հարցաշարի հարցադրումը վերաբերում է տ/տ համակարգչի ինտերնետին միացված լինելուն:
			8. Հարցաշարի 44-րդ հարցում ավելացնել **«Ոչ»** տարբերակը	8. Ընդունվել է:

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
			9. Ծրագրի նախագծում ավելացնել հարց՝ հանրության ֆինանսական գրագիտության վերաբերյալ:	**9.** Չի ընդունվել, քանի որ Ծրագրի նախագծում հարցերն ընտրելիս առաջնահերթություն է տրվել Եվրոստատի հետ համատեղ մշակված, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 2010 թվականի ռաունդում մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներին, որում նման հարց նախատեսված չէ:
6	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ա. Մանուկյան**	24.12.09 N 12 / 5-06-6488	Դիտողություններ և առաջարկություններ չկան	
7	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ա.Պետրոսյան** **ՀՀ** աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար **պարոն Մ. Մնացականյան**	N0 Ե 2009-11864	**1. 5-րդ կետում՝ «Դուստր/որդի» բառերից հետո ավելացնել** «խնամակալության տակ գտնվող երեխա» բառերը: **2. 12-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ**. «Կրոնական դավանանքը» - Քրիստոնեություն, Մահմեդականություն, Հեթանոսություն, Հուդաիզմ, Աղանդավոր, Աթեիզմ, Այլ **3. 21-րդ կետի** «Ամուսնացած (գրանցված), Ամուսնացած փաստացի (առանց գրանցման) ցուցանիշների համար ավելացնել «առաջին անգամ որ տարիքում» հարցադրումը: **4. 22-րդ կետը** «Կանանց համար նշել» բառերից հետո շարադրել հետևյալ բովանդակությամբ.«քանի երեխա է ծննդաբերել, առաջին անգամ որ տարիքում, նրանցից քանիսն են ողջ, նրանցից քանիսն են աղջիկ»: **5. 30-րդ կետում** «Չգիտի՝ որտեղ կամ ինչպես փնտրել աշխատանք» բառերից հետո լրացնել **«Առաջարկվող աշխատանքի վարձատրությունը բավարար չէ» բառերը:**	**1.** Ընդունվել է: **2.** Ընդունվել է: **Չի ընդունվել 3-րդ .և 4-րդ** կետերով առաջարկությունները, քանի որ բնակչության բնական շարժի ընթացիկ հաշվառմամբ առկա է այդ տեղեկատվության ստացման այլ աղբյուր: **5.** Ընդունվել է:
8	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Մ. Մկրտչյան**	17.12.2009 N 21-06-14/1341	**1. 18-րդ կետի վերաբերյալ** 1.Շարադրել հետևյալ տեսքով՝ Կրթություն չունի, Տարրական հանրակրթական, Հիմնական հանրակրթական, Միջնակարգ հանրակրթական, Նախնական մասնագիտական (արհեստագործական), Միջին մասնագիտական, Բարձրագույն մասնագիտական (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), Հետբուհական մասնագիտական (հետազոտող, ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի	**1**. Ընդունվել է:

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
			պաշտպանել), Գիտության թեկնածու, Գիտության դոկտոր **2. 20-րդ կետի վերաբերյալ** Ուսումնական հաստատության տեսակը՝ **Նախադպրոցական հաստատություն,** Տարրական դպրոց, Միջին դպրոց, Ավագ դպրոց, Նախնական մասնագիտական (արհեստագործական), Միջին մասնագիտական, Բարձրագույն մասնագիտական, Հետբուհական մասնագիտական	2. Ընդունվել է մասնակիորեն, քանի որ հարցը տրվում է 6 և բարձր տարիքի անձանց, այդ իսկ նկատառումով նախադպրոցական հաստատության ներառումը ցանկում անիմաստ է:
9	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ա.Նազարյան**	18.12.2009թ. N 510-1-783	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
10	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Շ. Քոչարյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-
11	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, գլխավոր գանձապետ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ա. Ջանջուղազյան**	22.12.09 N 3/5-1-354-8568	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
12	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ե. Զախարյան**	18.12.2009թ. Ե-4/5263	**Տնային տնտեսությունների բաժնի 33-րդ կետում** «Բնակելի տան մի մաս» բառերը հանել, քանի որ ՀՀ օրենսդրությամբ՝ մասնավորապես ՀՀ քաղաքաշինության նախարարի և ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի 1998թ մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ըստ նպատակային նշանակության շենքերի և շինությունների դասակարգումը» N 108-Կ համատեղ հրամանով հստակ սահմանված է բնակելի շինության տեսակները և «բնակելի տան մի մաս» հասկացություն չկա:	Ընդունելի չէ, քանի որ այս դեպքում նկատի է առնվել տնային տնտեսության զբաղեցրած բնակելի միավորը և հնարավոր է, որ հարցվող տնային տնտեսությունը, զբաղեցնի բնակելի տան մի մասը միայն:
13	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Հ. Հարությունյան**	22.12.09 N 2/3/2-1541	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
14	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Հ. Հունանյան**	21.12.2009թ. 10/4-1-3754	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
15	Երևանի քաղաքապետ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Գ. Բեգլարյան**	03/42-26164-h 25.01.2010 Ն-106	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
16	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Գ. Եգանյան**	21.12.2009թ. N1/6-1379	1. Ելնելով այն հանգամանքից, որ վերջին տարիներին բավական խոշոր ծավալների է հասել արտերկրից Հայաստան ֆիզիկական անձանց անունով դրամական փոխանցումները (տրանսֆերտներ), նպատակահարմար ենք գտնում հարցաշարի **17-րդ հարցում** ներառել հնարավոր պատասխան նաև «Արտասահմանից ստացված դրամական միջոցներ»: 2. Առաջարկում ենք նաև հարցաշարի 12-րդ՝ Կրոնական դավանանքը հարցում տալ հավանական պատասխանների ցանկը, որը կօգնի ճիշտ կողմնորոշվել:	1. Ընդունվել է: 2. Ընդունվել է:
17	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պետ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ն. Մուրադխանյան**	17.12.2009թ 25/01-64145	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
18	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Ա. Պողոսյան**	17.12.2009թ. 1.1-1011	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
19	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ տնօրեն, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Հ. Չոբանյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
20	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Կ. Մարգարյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-
21	ՀՀ ԳԱԱ-ի տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Վ. Հարությունյան**	17.12.2009թ. 2469-218	**<u>Տնային տնտեսությունների հատվածին առնչվող մասի գծով</u>** առաջարկում է առանձնացված տեղ հատկացնել արտերկրում բնակվող բարեկամներից և հարազատներից ստացվող տրանսֆերտներին (ըստ երկրների և ստացման ձևի՝ փոխանցումով և կանխիկ) վերաբերյալ մանրամասն տվյալների հավաքագրմանը, որն ավելի հստակ պատկերացում կտա դրսից ստացվող տրանսֆերտների ծավալի վերաբերյալ, քանի որ ՀՀ ունի նշանակալից սփյուռք:	Ընդունվել է մասնակի, հարցաթերթի S/S հատվածին առնչվող մասում ավելացվել է հարց հետևյալ բովանդակությամբ՝ «Արտերկրում բնակվող բարեկամներից և հարազատներից ստանում եք արդյոք դրամական օգնություն» : Ինչ վերաբերվում է ըստ երկրների տվյալների հավաքագրմանը, ապա դա ընդունելի չէ, քանի որ մարդահամարի հարցաշարը հնարավոր չէ չափից ավելի ծանրաբեռնել:
22	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ **պարոն Յու. Սուվարյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-
23	Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպան **պարոն Ա. Հարությունյան**	24.12.2009թ. N-Լ-0427	**Դիտողություններ և առաջարկություններ չկան** Կարևորում ենք «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անհատական տվյալների մշակմանն, ինչպես նաև «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբնական (անհատական) տեղեկատվության գաղտնիության ապահովմանն առնչվող պահանջների պահպանումը :	-
24	ՀՀ գյուղատնտեսության նախարար **պարոն Գ. Ալավերդյան**	21.12.09թ. 07 ԳԱ-02-5678	**<u>51-րդ կետում</u>** «Տնային տնտեսության ակվակուլտուրաների արտադրությամբ (ձկնորսություն, ձկնաբուծություն) զբաղվելը՝ **Այո, Ոչ** տարբերակներց հետո լրացնել՝ «Եթե այո, ապա ներառել լճակային ձկնաբուծության տարածքը» բառերը:	Չի ընդունվել, քանի որ Գյուղատնտեսության ոլորտին S/S տրվող հարցերն արդեն իսկ բավարար են հնարավորություն ընձեռնելու Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների ռեգիստր ձևավորելու համար, որը հիմք կհանդիսանա Գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ հաշվառման հասցեական դաշտի

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
				ձևավորման համար, իսկ այդ հարցը, ի թիվս այլ հարցերի կտրվի Գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ:
25	ՀՀ էկոնոմիկայի նախարար **պարոն Ն.Երիցյան**	24.12.2009թ. N 01/10.32/5482-09	Հաշվի առնելով Հայաստանում տեղեկատվական հասարակություն ձևավորելու նպատակադրումը՝ առաջարկվում է հարցաշարի 40-րդ կետից հետո ավելացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ. «Ընտանիքի անդամներից քանիսն են օգտվում ինտերնետ կապից տեղեկատվություն ստանալու/փոխանցելու համար»:	Չի ընդունվել, քանի որ հարցադրումները վերաբերվում են տնային տնտեսություններին, այլ ոչ թե տ/տ առանձին անդամներին :
26	ՀՀ քաղաքաշինության նախարար **պարոն Վ.Վարդանյան**	22.12.09թ. 01/18/5215-09	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
27	ՀՀ սփյուռքի նախարար **տիկին Հ.Հակոբյան**	23.12.2009 01/16/2084-09	**1.** Հարցաշարի 2-րդ հարցում՝ «բացակա» բառից հետո ավելացնել «փախստական» բառը **2.** 9-րդ հարցում ավելացնել երկքաղաքացիության մասին հարց **3.** 26-րդ հարցում «սեփականատեր» բառից հետո ավելացնել «սփյուռքահայ» բառը	<u>1.</u> Ընդունելի չէ, քանի որ հարցը նպատակ ունի որոշելու բնակության կատեգորիան: <u>2.</u> Ընդունվել է : <u>3.</u> Չի ընդունվում, քանի որ հարցը վերաբերվում է հարցվողի զբաղվածության կարգավիճակին : Մեկ հարցադրումով հնարավոր չէ սփյուռքահային «օտարերկրյա ներդրումների մասով» պարզել, այն մարդահամարի հարցաթերթի հետագա մշակման արդյունքում կարող է պարզվել մի քանի հարցերի համադրումով :
28	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տնօրեն **տիկին Ս. Հարությունյան**	17.12.2009թ. Թիվ 01/1484	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
29	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ **պարոն Ա.Ղազարյան** Պատասխանել է **Գագիկ Մակարյանը ՀԱԳ (Գ) Մ տնօրեն**	22.12.2009թ. N 203	**1.** Հասցեամասում տալ պարզաբանում, ինչ անհրաժեշտություն կա նշել «Կազմակերպության անվանումը» **2. 10-րդ կետում** «Պարսիկ» բառը փոխարինել «Իրանացի» բառով	<u>1.</u> Նկատի է առնվել ծերանոցների, մանկատների և նման այն կազմակերպությունների անվանումները, որտեղ բնակվում են խմբային տնային տնտեսություններ: <u>2</u>. ՀՀ ԳԱԱ կողմից մշակված «Ազգությունների կոդավորման ձեռնարկում» որպես ազգություն

	ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի անդամ և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչի անվանումը	Ստացված գրության ամսաթիվը/ համարը	«ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի Ծրագրի (հարցաշարի)» նախագծի վերաբերյալ	
			Առաջարկություններ և դիտողություններ	*Նախագծում առաջարկությունների և դիտողությունների ընդգրկման կամ չընդգրկման հիմնավորումը*
			3.27-րդ կետում ավելացնել «Ինչքան ժամանակ է չի աշխատում և չաշխատելու պատճառը :	թվարկվածների շարքում գոյություն ունի նաև «պարսիկ» տարբերակը: 3.Չի ընդունվել չէ, քանի որ հարցի վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն արտացոլվում է ՀՀ ԱՎԾ կողմից S/S կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով հրապարակված զեկույցներում, իսկ մարդահամարի հարցաթերթը հնարավոր չէ այդքան ծանրաբեռնել:
30.	Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի նախագահ **պարոն Է. Թումասյան**	24.12.2009թ. 05-02/31	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-
31	ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի նախագահ **պարոն Մ.Սարգսյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-
32	ՀՀ ԳԱԱ-ի նախագահ **պարոն Ռ. Մարտիրոսյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-
33	ՀՀ ԱՎԾ առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի անդամ, Հայաստանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան **պարոն Հ. Սարգսյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-
34	ՀՀ ԱՎԾ առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի անդամ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Վիճակագրության» ամբիոնի դոցենտ **պարոն Մ. Ֆահիրադյան**		Պատասխան գրություն չի ստացվել	-

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԾՐԱԳԻՐ (ՀԱՐՑԱՇԱՐ)

ՀԱՍՑԵԱՄԱՍ

Բնակելի միավորի և հարցաթերթի համարները
Մարդահամարի կազմակերպման տեղամասերի համարները՝ մարդահամարի տեղամաս, հրահանգչական տեղամաս, հաշվային տեղամաս
Մարզ, Տարածք, Համայնք, Բնակավայր/Վարչական շրջան
Տնային տնտեսության հասցեն, հեռախոսի համարը, եթե կազմակերպություն է, ապա նաև կազմակերպության անվանումը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ազգանունը, Անունը, Հայրանունը
2. Բնակության կատեգորիան (հիմնական բնութագրիչ)
   - Մշտապես ներկա
   - Ժամանակավոր ներկա
   - Բացակա
3. Մարդահամարի հաշվառման պահին բնակավայրից բացակայող անձի համար՝
   - Բացակայության ժամկետը (ամիսներով)
   - Պատճառը/նպատակը
   - Մարդահամարի հաշվառման պահին անձի գտնվելու երկիրը (Հայաստանում գտնվելու դեպքում՝ մարզը)
4. Մարդահամարի հաշվառման պահին ժամանակավոր ներկա անձի համար՝
   - Գտնվելու ժամկետը (ամիսներով)
   - Պատճառը/նպատակը
   - Մշտական բնակության երկիրը (Հայաստանում գտնվելու դեպքում՝ մարզը և բնակավայրը)
5. Ազգակցական կապը տնային տնտեսության առաջինը գրված անդամի հետ (հիմնական բնութագրիչ)
   - Տնային տնտեսության առաջինը գրված անձ

   <u>նրա</u>
   - Կինը/ամուսինը
   - Դուստրը/որդին
   - Խնամակալության տակ գտնվող երեխան
   - Մայրը/հայրը
   - Քույրը/ եղբայրը
   - Սկեսուրը/սկեսրայրը/զոքանչը/աները
   - Հարսը/փեսան
   - Տատը/պապը
   - Թոռը
   - Այլ ազգական
   - Ոչ ազգական
   - Սենյակակից (միայն խմբային տնտեսությունների համար)

<u>Հարց 5 բ)</u> Մոր (հոր) հերթական համարը

6. Սեռը (հիմնական բնութագրիչ)
7. Ծննդյան օրը, ամիսը, տարին (հիմնական բնութագրիչ)

<u>Հարց 7.</u> ա) օրը բ) ամիսը գ) տարին դ) Տարիքը՝ լրացած տարիներով

8. Ծննդավայրը (հիմնական բնութագրիչ) - Երկիրը (Հայաստանի դեպքում՝ մարզը և բնակավայրը)

9. Քաղաքացիությունը (հիմնական բնութագրիչ)

Երկքաղաքացիություն ունեցողների համար, կնշվի նաև երկրորդ երկիրը

10. Ազգությունը (լրացուցիչ բնութագրիչ)
    - Հայ
    - Եզդի
    - Ռուս
    - Ասորի
    - Հույն
    - Ուկրաինացի
    - Քուրդ
    - Լեհ
    - Բելոռուս
    - Վրացի
    - Հրեա
    - Գերմանացի
    - Պարսիկ
    - Այլ
11. Մայրենի լեզուն և այլ լեզու, որին ազատ տիրապետում է (լրացուցիչ բնութագրիչ)
    - Հայերեն
    - Եզդիերեն
    - Ռուսերեն
    - Ասորերեն
    - Հունարեն
    - Ուկրաիներեն
    - Քրդերեն
    - Լեհերեն
    - Բելոռուսերեն
    - Վրացերեն
    - Եբրաերեն
    - Անգլերեն
    - Ֆրանսերեն
    - Գերմաներեն
    - Իսպաներեն
    - Պարսկերեն
    - Թուրքերեն
    - Այլ
12. Կրոնական դավանանքը (Հավատքը) (լրացուցիչ բնութագրիչ)
    - Հայ առաքելական
    - Կաթոլիկ
    - Ուղղափառ
    - Բողոքական (ներառյալ՝ անգլիկաններ, բապտիստներ, Եկեղեցական եղբայրներ, կալվինիստներ, ավետարանչականներ, լութերականներ, մեթոդաբաններ, պիետիստներ, հիսունականներ և այլն)
    - Եհովայի վկա
    - Այլ քրիստոնեական
    - Հեթանոսական
    - Մահմեդական
    - Բուդդայական
    - Հուդայական

- Այլ
- Ոչ մի

13. Ծննդյան օրվանից տվյալ բնակավայրում անընդհատ բնակվելը (հիմնական բնութագրիչ)
- Այո
- Ոչ

Եթե՝ ոչ, ապա նշել

14. Տարեթիվը, որից սկսած անընդհատ բնակվում է տվյալ բնակավայրում (հիմնական բնութագրիչ)

15. Նախկին բնակության երկիրը (հիմնական բնութագրիչ) - (Հայաստանի դեպքում՝ մարզը և բնակավայրը)

16. Ինչպիսի՞ բնակավայրից է եկել (հիմնական բնութագրիչ)
- Քաղաքային
- Գյուղական

17. Ո՞րն է բնակության վայրը փոխելու պատճառը
- Այլ երկրներից պատերազմական գործողությունների հետևանքով
- Ընտանեկան
- Հայրենադարձություն
- Այլ

18. Գոյության միջոցի հիմնական աղբյուրը (լրացուցիչ բնութագրիչ)
- Վարձու աշխատանք
- Ինքնազբաղվածություն գյուղացիական տնտեսությունում
- Ինքնազբաղվածություն (բացառությամբ գյուղացիական տնտեսությունում)
- Եկամուտ սեփականությունից (գյուղացիական տնտեսությունից, վարձակալության դիմաց ստացված վարձավճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)
- Վարկերի, խնայողությունների օգտագործում և կապիտալի (այդ թվում նաև գույքի) վաճառք
- Կենսաթոշակ՝ նշանակված պետության կողմից
- Կենսաթոշակ՝ նշանակված գործատուի կողմից
- Նպաստ պետական մարմնից և ոչ պետական աղբյուրից
- Կրթաթոշակ
- Պետական ապահովության (պահպանություն) ներքո

Դրամական օգնություն
- Պետական աղբյուրից
- Արտասահմանում բնակվող հարազատներից, բարեկամներից, ծանոթներից
- Հայաստանում բնակվող հարազատներից
- Խնամքի տակ
- Այլ աղբյուր

ՀԱՐՑԵՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ 6 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

19. Կրթությունը, գիտական աստիճանը (հիմնական բնութագրիչ)
- Կրթություն չունի
- Տարրական հանրակրթական
- Հիմնական հանրակրթական
- Միջնակարգ հանրակրթական
- Նախնական մասնագիտական (արհեստագործական)
- Միջին մասնագիտական

- Բարձրագույն մասնագիտական (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս)
- Հետբուհական մասնագիտական (հետազոտող, ավարտել է ասպիրանտուրան, սակայն չի պաշտպանել)
- Գիտության թեկնածու
- Գիտության դոկտոր

20. Տարրական կրթություն չունեցողների համար (լրացուցիչ բնութագրիչ)
    - Տառաճանաչ
    - Ոչ տառաճանաչ
21. Ուսումնական հաստատություն հաճախելը (լրացուցիչ բնութագրիչ)
    - Այո
    - Ոչ

Եթե՝ այո՝ ուսումնական հաստատության տեսակը՝

- Տարրական դպրոց
- Միջին դպրոց
- Ավագ դպրոց
- Նախնական մասնագիտական (արհեստագործական)
- Միջին մասնագիտական
- Բարձրագույն մասնագիտական
- Հետբուհական մասնագիտական

ՀԱՐՑԵՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ 15 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

22. Ամուսնական վիճակը (հիմնական բնութագրիչ)
    - Երբևէ չամուսնացած
    - Ամուսնացած (գրանցված)
    - Ամուսնացած փաստացի (առանց գրանցման)
    - Միայն եկեղեցու կանոնական ծեսով իրագործված ամուսնություն
    - Այրի/կնակորույս
    - Ամուսնալուծված (գրանցված)
    - Բաժանված (առանց գրանցման)
23. Իգական սեռի ներկայացուցիչների համար նշել (լրացուցիչ բնութագրիչ)
    - քանի՞ երեխա է ծննդաբերել
    - նրանցից քանի՞սն են ողջ

ՀԱՐՑԵՐԸ ԼՐԱՑՎՈՒՄ ԵՆ 15-75 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

24. Աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք ունենալը փորձնական մարդահամարի հաշվառման պահից մեկ շաբաթ առաջ (ներառյալ՝ աշխատանքից ժամանակավորապես բացակայողները) (հիմնական բնութագրիչ)
    - Այո
    - Ոչ
25. Եթե՝ այո՝ Հիմնական աշխատավայրի գործունեության տեսակը (հիմնական բնութագրիչ)
26. Զբաղմունքը հիմնական աշխատավայրում (հիմնական բնութագրիչ)
27. Զբաղվածության կարգավիճակը (հիմնական բնութագրիչ)
    - Վարձու աշխատող
    - Գործատու (սեփականատեր՝ վարձու աշխատող (ներ)ի մշտական ներգրավմամբ)
    - Ինքնազբաղված գյուղացիական տնտեսությունում
    - Ինքնազբաղված այլ գործունեությամբ

- Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ
- Արտադրական/սպառողական կոոպերատիվի անդամ
- Այլ

Աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք չունեցող անձանց համար

28. Վերջին 4 շաբաթվա ընթացքում փորձե՞լ է գտնել աշխատանք
    - Այո, փնտրել է վճարովի աշխատանք
    - Այո, փորձել է սկսել սեփական գործ
    - Ոչ

Եթե փնտրում է աշխատանք, ապա՝

29. Առաջի՞ն անգամ է փնտրում աշխատանք
    - Այո
    - Ոչ
30. Եթե առաջարկվի համապատասխան աշխատանք, պատրա՞ստ է անցնել աշխատանքի առաջիկա երկու շաբաթվա ընթացքում
    - Այո
    - Ոչ

Եթե չի փնտրում աշխատանք

31. Պատճառը՝
    - Գտել է աշխատանք և կանցնի աշխատանքի առաջիկա 2 շաբաթում
    - Դիմել է աշխատանքի ընդունվելու խնդրանքով և սպասում է պատասխանի
    - Վարում է տնային տնտեսություն
    - Աշխատանք գտնելու հույս չունի
    - Չգիտի՝ որտեղ կամ ինչպես փնտրել աշխատանք
    - Առաջարկվող աշխատանքի վարձատրությունը բավարար չէ
    - Չունի մասնագիտական համապատասխան հմտություններ
    - Աշխատելու անհրաժեշտություն/ ցանկություն չունի
    - Սովորում է
    - Տարիքային/ առողջական
    - Այլ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

Բ.1. Բնակելի միավորով ապահովվածությունը (հիմնական բնութագրիչ)

- Այո
- Անօթևան

Բ.2. Ու՞մ սեփականությունն է հանդիսանում բնակելի միավորը (հիմնական բնութագրիչ)

- Տվյալ տնային տնտեսության անդամի
- Պետության
- Համայնքի
- Իրավաբանական անձի
- Այլ անձանց

Բ.3. Բնակելի շինության տեսակը (հիմնական բնութագրիչ)

- Բնակելի տուն (առանձնատուն)
- Բնակելի տան մի մաս
- Բազմաբնակարան շենքի բնակարան
- Բնակարանի մի մաս
- Տնակ/ ժամանակավոր կացարան
- Համատեղ բնակության շինություն (ինստիտուցիոնալ)
- Հանրակացարան
- Այլ՝ բնակության համար հարմարեցված շինություն

Բ.4. Շահագործման հանձնելու տարին (հիմնական բնութագրիչ)

- Մինչև 1950թ.
- 1951-1970
- 1971-1980
- 1981-1990
- 1991-2000
- 2001-2010թ.թ.

Բ.5.Շինության արտաքին պատերի շինանյութը (լրացուցիչ բնութագրիչ)

- Քար
- Պանելային
- Մոնոլիտ
- Փայտ
- Խառնակազմ նյութ
- Այլ

Բ.6. Տնային տնտեսության զբաղեցրած սենյակների թիվը (հիմնական բնութագրիչ)

Բ.7. Բնակելի միավորի ընդհանուր մակերեսը, քառ.մ (հիմնական բնութագրիչ)

Բ.8. Հիմնական (ստացիոնար) հեռախոսի առկայությունը (լրացուցիչ բնութագրիչ)

- Այո
- Ոչ

Բ.9. Համակարգչի առկայությունը (լրացուցիչ բնութագրիչ)

- Այո
- Ոչ

Բ.10.Առկայության դեպքում, համակարգիչն ինտերնետին միացված լինելը (լրացուցիչ բնութագրիչ)

- Այո, մշտական
- Այո, ոչ մշտական
- Ոչ

Բ.11.Ջեռուցման հիմնական միջոցը (հիմնական բնութագրիչ)

- Անհատական (լոկալ) ջեռուցման համակարգ
- Կենտրոնացված ջեռուցում
- Գազ
- Էլեկտրականություն
- Փայտ
- Աթար
- Այլ

Բ.12. Ջրհեռացման (կոյուղացման) համակարգը (լրացուցիչ բնութագրիչ)

- Միացված է կոյուղու կենտրոնացված համակարգին
- Ունի տեղական (լոկալ) ցանց
- Այլ

Բ.13. Ջրամատակարարման հիմնական աղբյուրը (հիմնական բնութագրիչ)

- Կենտրոնացված ջրամատակարարում բնակելի միավորում
- Կենտրոնացված ջրամատակարարում շենքում, բայց ոչ բնակելի միավորում
- Բերովի/գնովի ջուր
- Ջրակուտակման սեփական համակարգ
- Գետեր/աղբյուրներ
- Ջրհոր
- Այլ

Բ.14. Լոգասենյակի կամ ցնցուղի առկայությունը (հիմնական բնութագրիչ)

- Այո բնակելի միավորում
- Այո շենքում, բայց ոչ բնակելի միավորում
- Այո շենքից դուրս
- Այլ
- Ոչ

Բ.15. Ջուգարանի առկայությունը (հիմնական բնութագրիչ)

Ողողվող

- Բնակելի միավորում
- Բնակմիավորից դուրս, միայն տվյալ տնային տնտեսության համար
- Բնակմիավորից դուրս, ընդհանուր օգտագործման համար

Չողողվող

- Միայն տվյալ տնային տնտեսության համար
- Ընդհանուր օգտագործման
- Այլ

Բ.16. Աղբահանության ձևը՝

Շենքի աղբատար խողովակով

- Կանոնավոր հեռացվող
- Անկանոն հեռացվող

Այլ ճանապարհով

- Թափվում է կանոնավոր հեռացվող աղբարկղը
- Թափվում է անկանոն հեռացվող աղբարկղը
- Այլ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

Գ.1. Տնային տնտեսության գյուղատնտեսությամբ զբաղվելը (լրացուցիչ բնութագրիչ)

- Այո
- Ոչ

Գ.2. Տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ ներառյալ վարձակալության տրվածը (հա՝ 0.00 ճշտությամբ) (լրացուցիչ բնութագրիչ)

- Ընդամենը,
  - այդ թվում՝ Վարելահող
- Բազմամյա տնկարկ
  - պտղատու այգի
  - հատապտղանոց
  - խաղողանոց
- Բնական խոտհարք
- Արոտավայր

Գ. 3. Տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (գլուխ) (լրացուցիչ բնութագրիչ)

- Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը
  - որից՝ կովեր
- Խոզեր
- Ոչխարներ
- Այծեր
- Թռչուններ

Գ.4. Տնային տնտեսության ակվակուլտուրաների արտադրությամբ (ձկնորսություն, ձկնաբուծություն) զբաղվելը (լրացուցիչ բնութագրիչ)

- Այո
- Ոչ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

1. Արտերկրում բնակվող հարազատներից և բարեկամներից ստանում եք արդյո՞ք գումար

- Այո, կանոնավոր
- Այո, ժամանակ առ ժամանակ
- Այո, հազվադեպ
- Ոչ

2. Վերջին 12 ամիսների ընթացքում, արձանագրվել է արդյո՞ք

Ծնունդներ

- Այո, գրանցվել է ՔԿԱԳ-ով
- Այո, չի գրանցել ՔԿԱԳ-ով
- Ոչ

Մահվան դեպքեր

- Այո, գրանցվել է
- Այո, չի գրանցվել
- Ոչ